Ա/Ձ Տիգրան Վահրադյանին տրամադրված արտարժույթի առուվաճառքի թիվ 461 լիցենզիան վերաձևակերպելու մասին

2022-10-04

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհուրդ

Որոշում թիվ 172 Ա
04.10.2022

Ա/Ձ Տիգրան Վահրադյանին տրամադրված արտարժույթի առուվաճառքի թիվ 461 լիցենզիան վերաձևակերպելու մասին

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի «իթ» կետով, ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի մայիսի 15-ի թիվ 138-Ն որոշմամբ հաստատված «Արտարժույթի առուվաճառքի գործառնությունների լիցենզավորումը և կարգավորումը» Կանոնակարգ 10-ի 9-րդ կետով, *հաշվի առնելով այն, որ* Ա/Ձ Տիգրան Վահրադյանը 09.09.2022թ. դիմել է ՀՀ կենտրոնական բանկ իրեն տրամադրված արտարժույթի առուվաճառքի թիվ 461 լիցենզիան վերաձևակերպելու միջնորդությամբ, *հիմք ընդունելով* ՀՀ կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովի եզրակացությունը (2022թ. սեպտեմբերի 30-ի թիվ 41 արձանագրություն)՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

Ո ր ո շ ու մ է.

Վերաձևակերպել Ա/Ձ Տիգրան Վահրադյանին տրամադրված թիվ 461 լիցենզիան՝ կապված փոխանակման կետի գործունեության վայրի փոփոխության հետ (գործունեության վայրի նոր հասցեն է՝ ՀՀ, Արարատի մարզ, Մրգավան համայնք, Մ. Գրիգորյան փողոց 30/1):

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ներսես Երիցյան

2022 թ. հոկտեմբերի 10, ք. Երևան